ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/3211/02/24

ՈՐՈՇՈՒՄ

Քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին

16 օգոստոսի 2024թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով թիվ ԵԴ2/3211/02/24 քաղաքացիական գործն ըստ հայցի «Լեգենդար» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմ՝ համայնքային կառավարչական հիմնարկի՝ թիվ ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/06 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք Տաշիր համայնքի ղեկավարի 08.04.2024 թվականի թիվ 357-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«Լեգենդար» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. ապրիլի 25-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմ՝ համայնքային կառավարչական հիմնարկի՝ թիվ ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/06 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը Դատարանի (դատավոր Ա. Ստեփանյան) 2024թ. ապրիլի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:
Դատարանի (դատավոր Ա. Ստեփանյան) 2024թ. մայիսի 23-ի որոշմամբ Հայցվորի

ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի առարկայի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ, բավարարվել է:
Թիվ ԵԴ2/3211/02/24 քաղաքացիական գործը 2024թ. օգոստոսի 12-ին վերամակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. օգոստոսի 13-ին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Լեգենդար» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմ՝ համայնքային կառավարչական հիմնարկի՝ թիվ ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/06 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք Տաշիր համայնքի ղեկավարի 08.04.2024 թվականի թիվ 357-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԴ2/3211/02/24 քաղաքացիական գործն ընդունել վարույթ:
Թիվ ԵԴ2/3211/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. սեպտեմբերի 27-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am